Գերապայծառ և գերայարգ Աբբահօրդ մերում
տեառն տեառն Միխիթարայ վարդապետի

. . . . յուլիսի երկուսն յելինք ի Վէնայու։ 12 *զօլօթայ խոստացանք նաւավարին. զի պատահմամբ մին փոքրաւոր հետս գտուաւ, որ նամսային լեզուն և տաճկէվար լաւ գիտէր. այլ ես ճանապարհին աւազակք եկին ի նաւն մեր ահացուցանելով զմեզ, բայց վնաս ոչ ետուն. միայն հացերս և գինին առին. ապա զկնի մեր եկօղ նաւին վնաս չորս ձ ղռուշ հասուցին, և միջի մարդկանց նեղութիւն ետուն. յուլիսի* 21 *հազիւ հասաք բելըրդատ... երեքշաբթի մտի ի բէլըրդատ. հետևեալ չորեքշաբթին սկսան պատերազմիլ ընդ տաճկաց. բայց յաջողումն ոչ եղև սոցա. այսօր երեք օր է որ այսքան հարիւրաւոր վիրաւորեալ գան ի քաղաք. տեսանելով զսոսա ողորմելի գալարի գաղիս մեր. բայց թէ որքան մեռեալ են ներ պատերազմին ոչ է յայտ. այլ ես երեք սէհէթ մերձեցեալ է քաղաքիս, այսինքն տաճիկն. վասն այսորիկ մեծ ահ և երկիւղի միջի է քաղաքս...։*

Գերյարգութեան քում մնամ
Պատրաստական նուաստագունեղ ծառայ
Հայր Յակոբ

Յամի տեառն 1739
յուլիսի 24
[*Պելկրատ*]

Ղ.

Գերապայծառի և գերայարգ Աբբա Հօրդ մերում
տեառն տեառն Միխիթարայ վրդ.ի

. . . . տեղիս ահարկութիւնն օր ըստ օրէ բազմանայ, զի ցերեկ և գիշեր անդադար ջանան թէ բերրն պաշարել այնքան սաստիկ թօփին գուլիլուլէն, և ղումպարան թափեն ներ բերրին, որ ոչ կարեմք մերձ եղեալ եկեղեցին գնալ, կամ դրսի դուռն նայիլ ։... Դարձեալ քաղաքապետն հրամայեաց թէ որքան կին կայ ներ քաղաքիս՝ բոլորն թող ելանեն, վասն այն բազմութեամբ գնացին վարատին. ես բազում այր մարդիկք գնացին. մին քանի մարդ մնաց մեր ազգէն, այնք զորս տուն ունին, զի քաղաքապետն ասաց. Ով որ գնա, տունն և ապրանքն ոչընչանալոց է, այլ իւրեան ոչ տանք։ Դարձեալ երկիւղ ունիմք թէ վարիչն առնեն այլազգն, յայնժամ ժողովին ներսի բերրն. բայց ներսի բերրն բնակիլն առաւել դժուար է, քանզի այնքան կրակ թափելոց են անհաւատքն. ով է որ ապրելոց է...։

Նուաստագունեղ ծառայ
Հայր Յակոբ ողորմելի

1739
Օգոստոսի 7
[*Պելկրատ*]

ՂԱ.

Պոլսոյ հրեայք հրաման ստանալով կը մասնակցին Օսմանեան ցոյցերու՝ անոնց յաջողութեանց ի նպաստ։

Նամակագիրս է Մխիթարայ Միաբանութենէն Ջուղայեցի Հ. Պետրոս Մարտիկենց։